# Ամփոփ տեղեկատվություն

Թեսթավորման առաջադրանքը բաղկացած է 40 հարցից, որից 30-ն ընդհանուր մասնագիտական, իսկ 10-ը որակավորման ոլորտին առընչվող նեղ մասնագիտական հարցեր են: Ստորև ներկայացվում են թեսթերում (առաջադրանքներում) ընդգրկվող հարցերի չափաբաժինները:

| Փորձագետների որակավորման պայմանական կոդերը՝ ըստ համապատասխանության գնահատման ձևերի, ուղղությունների և ոլորտների | Հարցերի քանակը առաջադրանքում (հատ) | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ստանդարտացում | Համապատասխա-նության հավաստում | Հավատարմագրում | Չափումների միասնականության ապահովում | Տեխնիկական կանոնակարգերի պահանջներ | Սննդամթերքի անվտանգության կարգավորման հիմնադրույթներ | Տեխնիկական անվտանգության կարգավորման հիմնադրույթներ | Ոլորտի կառավար-ման հիմնադրույթներ | Էկոլոգիական կարգավորման հիմնադրույթներ | Որակավոր-ման ոլորտին առնչվող նեղ մասնագիտական հարցեր |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1.01 | 3 | 4 | 3 | 3 | 4 | 3 | 2 | 4 | 4 | 10 |
| 1.02 | 3 | 4 | 3 | 3 | 4 | 3 | 2 | 4 | 4 | 10 |
| 1.03.01 ÷ 1.03.49 | 3 | 4 | 3 | 3 | 4 | 3 | 2 | 4 | 4 | 10 |
| 1.04.50 ÷ 1.04.52 | 3 | 4 | 3 | 3 | 4 | 3 | 2 | 4 | 4 | 10 |
| 1.05 | 3 | 4 | 3 | 3 | 4 | 3 | 2 | 4 | 4 | 10 |
| 1.06 | 3 | 4 | 3 | 3 | 4 | 3 | 2 | 4 | 4 | 10 |
| 2.01 | 3 | 4 | 3 | 3 | 4 | 3 | 2 | 4 | 4 | 10 |
| 2.02 | 3 | 4 | 3 | 3 | 4 | 3 | 2 | 4 | 4 | 10 |
| 2.03.01 ÷ 2.03.49 | 3 | 4 | 3 | 3 | 4 | 3 | 2 | 4 | 4 | 10 |
| 2.04.50 ÷ 2.04.52 | 3 | 4 | 3 | 3 | 4 | 3 | 2 | 4 | 4 | 10 |
| 2.05 | 3 | 4 | 3 | 3 | 4 | 3 | 2 | 4 | 4 | 10 |
| 2.06 | 3 | 4 | 3 | 3 | 4 | 3 | 2 | 4 | 4 | 10 |
| 3.01 | 4 | 5 | 4 | 4 | 10 | 3 | 2 | 4 | 4 | |

Առաջին նիշը ցույց է տալիս համապատասխանության գնահատման ձևը՝

1. - համապատասխանության հավաստում
2. - հավատարմագրում
3. - պետական վերահսկողություն

Երկրորդ զույգ նիշերը ցույց են տալիս գործունեության ուղղությունները՝ համապատասխանության գնահատման հետևյալ գործառույթներում՝

**ա) համապատասխանության հավաստման գործառույթներում՝**

01- որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացում,
02- էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացում,
03- արտադրանքի համապատասխանության հավաստում,
04- ծառայությունների սերտիֆիկացում,
05- սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի սերտիֆիկացում,
06- տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերի սերտիֆիկացում:

**բ) հավատարմագրման գործառույթներում՝**

01- որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրում,
02- բնապահպանական (էկոլոգիական) կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրում,
03- արտադրանքի սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրում,
04- ծառայությունների սերտիֆիկացման մարմինների հավատարմագրում
05- սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրում
06- տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրում:

**գ) պետական վերահսկողության գործառույթներում՝**

01-արտադրանքի, ծառայությունների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների պահպանման պետական վերահսկողություն:

Երրորդ զույգ նիշերը ցույց են տալիս գործունեության ոլորտները: Որոշ պայմանական կոդերում երրորդ զույգ նիշերի բացակայությունը ցույց է տալիս, որ փորձագետի որակավորումն առնչվում է որակավորման բոլոր ոլորտների հետ: (3.01) կամ հաշվի չի առնվում դրանք (1.01, 1.02, 2.01, 2.02):

Թեսթերում (առաջադրանքներում) ընդգրկվող հարցերի չափաբաժինները կարող են փոփոխվել հիմնավորված դեպքերում: